Digitally signed by
BILYAN HAYK 3302810709
Date: 30.05.2024 16:34:56

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
08.05.2024 թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆ
հասարակական կազմակերպության 2023 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության`		
1.1 Լրիվ անվանումը		«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆ
1.2 ՀՎՀՀ-ն		02616434
1.3 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ Իսրայելյան փ. շ. 37 բն. 24
1.4 Պետական գրանցման համարը		211.171.758728
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2013-03-12
1.6 Հեռախոսը (այդ թվում` բջջային)		+(374)93232634
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		sona.constant@gmail.com
2 Գործադիր մարմնի ղեկավարի`		
Անունը ՍՏԵՓԱՆ ՌՈՍՏՈՄՅԱՆ	Ազգանունը ՌՈՍՏՈՄՅԱՆ	Պաշտոնը Նախագահ
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը		
Իրականացնել գործունեություն, որը արդյունքում Հայաստանը կդրվի աշխարհի մշակութային քարտեզի վրա, իսկ Երևանը կստանա Եվրոպական այլ քաղաքների հետ հակասարագոր մշակութային կյանք կարորի կարգակիճակ, դասւ]եւու[աշխարհի մշակութային մայրաքաղաքների շարքում		
Ստեղծել միջավայր, որից կծնվեն և կկրթվեն հայազգի ապագա սերդի տաղանդները, և ընդհանրապես կիրթ հասարակությունը		
Գերականգնել արվեստի բարձր չափանիշները, որոնցով որ կուղղորդվեն հայ երաժիշտները		
Հայաստան հրավիրել աշխարհի հեղինակավոր երաժիշտների, կազմակերպել միջազգային բարձր կարգի համերգներ		
Կազմակերպել վարպետության դասընթացներ մեծանուն երաժիշտների մասնակցությամբ		
Կազմակերպելն հայտարարել երաժշտական մրցույթներ ստեղծագործական, կատարողական և այլ ժանրերում		
Կազմակերպել միջազգային երաժշտագիտական գիտաժողովներ		
Պատվիրելհայ և օտարազգի կոմպոզիտորներին գրել նոր ստեղծագործություններ		
Աջակցել հայ երիտասարդ և կայացած երաժիշտների միջազգային ճանաչումը		
Կազմակերպել հայ և օտարազգի երաժիշտների համատեղ ելույթներ Հայաստանում և նրա սահմաններից դուրս		
Իրականացնել, հեռանկարներ երաժշտական շարքի համերգներ և լիառասաններ այլերկրներում		
Աջակցել արտերկրի առաջատար երաժշտական հաստատություններում ուսանող հայ ազգի երաժիշտներին կրթաթոշակների հայթհայթման և այլ հարցերում		
Տրամադրել կրթաթոշակներ առաջատար ուսանողներին		
Հիմնել Փառատոնի Ակադեմիան կրթական և համերգային գործունեություն ծավալելու նպատակով		
Հիմնել Փառատոնի նվագախումբ Հայաստանի և արտերկրի երաժիշտների մասնակցությամբ		
Նախաձեռնելն իրականացնելձայնագրողական և երաժշտական ձայներիզների թողարկում		
Ներկայացնել և գործունեություն ծավալել երաժշտական արվեստի բոլոր ժանրերում		
Համագործակցել Հայաստանի և արտերկրի պետական և մասնավոր կառույցների հետ, որոնց թվում դիվանագիտական, կրթական, զբոսաշրջային և այլ կազմակերպությունների հետ		
Համագործակցել Հայ Առաքելական Եկեղեցու և այլ հոգևոր կառույցների հետ հայ հոգևոր երաժշտությանը վերաբերող ծրագրերի իրականացման համար		
Կազմակերպել հայ երաժիշտների հյուրախաղեր արտերկրում		

Տպագրել գրքեր, կատալոգներ, պարբերականներ, ամսագրեր, նաև կայքի միջոցով և համացանցում
Իրականացնել գործունեություն Երևանում, ՀՀ մարզերում և Արցախում
Իրականացնել գործունեություն և ունենալ ներկայացուցչություններ արտերկրում
Անդրադառնալ Հայ սատանի համար կարևոր տարելիցներին և իրականացնել հատուկ ծրագրեր
Ստանալ դրամաշնորհներ և դրամական այլ նյութական նվիրատվություններ տեղական միջազգային կազմակերպություններից և բարերարներից
Իրականացնել դրամահավաքներ ինքնաֆինանսավորման նպատակով
Ունենալ հեռուստա և ռադիո հաղորդումներ
Իրականացնել,Փառատոնի համերգասրահի և արվեստի կենտրոնի կառուցապատման աշխատանքներ
Անդամակցել միջազգային և տեղական կառույցներին, մուծել անդամավճար, մասնակցել գագաթնաժողովների
Ներակայացնել,Փառատոնի ծրագրերը, նաև համերգները համացանցում
Գործուղել կազմակերպության հաշվին աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման և համագործակցության համար կարևոր միջազգային և տեր] ակ ան կազմակերպություններ և միջոցառումների
Հոգալ,Հայաստան հրավիրված երաժիշտների և հյուրերի ճանապարհածախսերը, ՀՀ մուտքի արտոնագրի, տեղական տրանսպորտի, սննդի և հյուրասիրության ծախսերդ
վարձակալել համերգասրահներ և համապատասխան երաժիշտների պահանջներին ձայնային և լուսային սարքավորումներ
Փոխհատուցել երաժիշտներին Հայ սատան այցելությունների հետ կապված ծախսերը
Անհրաժեշտության դեպքում, սիմֆոնիկ նվագախմբերի համար վարձակալել մարդատար և բեռնատար ինքնաթիռներ, հոգալ ապահովագրության, մաքսային և այլ ծախսերդ
Աշխատել ՀՀ և օտարերկրյա զանգվածային լրատվամիջոցների հետ միջոցառումները հավուր պատշաճի լուսաբանելու համար
Սահմանել լրատվամիջոցների հանդիսատեսի վարվելակերպի համապատասխան Հարգուկանոն միջոցառումների և համերգների համար

4 Հասարակական կազմակերպության՝

4.1 Անդամների թիվը	3
4.2 Կամավորների թիվը	
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը	1

6. Իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը
1	«Երևանյան հեռանկարներ» 24-րդ միջազգային երաժշտական փառատոնի շրջանակներում 2023 թվականին «Երևանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոնի կազմակերպում	ք. Երևան,	«Երևանյան հեռանկարներ»-ի ծրագրի նպատակն է՝ Հայաստանի միջազգային ճանաչելիության բարձրացումը, մշակութային դիվանագիտությունը, համաշխարհային քաղաքակրթական գործընթացներին լիիրավ մասնակցություն և ներգրավվածության ակտիվացումը, քաղաքակրթական համատեքստում ազգային ինքնության պատշաճ՝ ներկայացկածությունը և այլն	Ավարտված

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1	«Երևանյան հեռանկարներ» 24- րդ միջազգային երաժշտական փառատոնի շրջանակներում 2023 թվականին «Երևանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոնի կազմակերպում	ք. Երևան,	Ավարտված	«Երևանյան Հեռանկարներ»-ի ծրագրի նպատակն է Հայաստանի միջազգային ճանաչելիության բարձրացումը, մշակութային դիվանագիտությունը, համաշխարհային քաղաքակրթական գործընթացներին լիիրավ մասնակցություն և ներգրավվածությ ան ակտիվացումը, քաղաքակրթական համատեքստում ազգային ինքնության պատշաճ՝ ներկայացվածությունը և այլն:	Հայասատանը միակն է ողջ տարածաշրջանում ով կարող է հպարտանալ իր 24 ամյա հայտնի փառատոնով: Զևավորված փառատոնը իր շուրջը համախմբում է նույնարժեք մշակույթով անձանց: Ըստ ԵՄ Մշակույթի հանձնակատար Տիբոր Նավրաչիչի՝ Փառատոնը ամուր կերպով դրել է Հայասատանը Եվրոպայի գեղարվեստական և մշակութային քարտեզին:

2	Հարավկորեացի Ջասմին Չոյի մասնակցությամբ Արամ Խաչատրյանի 120-ամյակին նվիրված համերգ-երեկո	ք. Երևան,	Ավարտված	Փառատոնի, ինչպես նաև ծրագրի առաջնային նպատակն է Երևանը և Հայաստանը ներկայացնել որպես աշխարհի հզորագույն մշակութային կենտրոններից մեկը, ինչպես նաև ստեղծել հատուկ միջավայր: Ծրագրի նպատակն է ևս մեկ անգամ հնչեցնելու Խաչատրյանական հնչյունները, Հայաստանի միջազգային ճանաչելիության բարձրացումը	Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոնի, ինչպես նաև սույն ծրագրի առաջնային նպատակն է, Հայաստանի Հանրապետությունը ի դեմս Երևանի, ներկայացնել որպես աշխարհի հզորագույն մշակութային կենտրոններից մեկը, ինչպես նաև ստեղծել հատուկ միջավայր:
3	«Ստեղծագործ Եվրոպա» Հայաստանյան գրասենյակի ծրագրերի իրականացում ծրագրի կազմակերպման ծախսեր	ք. Երևան,	Ավարտված	«Ստեղծագործ Եվրոպա» Հայաստանյան գրասենյակի աշխատանքներն ուղղված են նպաստելու եվրոպական մշակութային տարածքում միջմշակութային կապերի զարգացմանը, ԵՄ մշակութային դրամաշնորհների «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի մասին Հայաստանում տեղեկացվածության բարձրացմանը, և ավելին	Կարելի է երկար խոսել հայ և եվրոպական մշակութային ավանդույթների միահյուսված անցյալի, փոխադարձ ազդեցությունների, միմյանցով հարուստ և համամարդկային լինելու մասին: Գրասենյակի կողմից իրականացվող ծրագրերն ու աշխատանքներն ուղղված են լինելու այդ փոխհամագործակցությա ն շարունակականության խթանմանը

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	46,516,300
8.2 Գույքը	
Ընդամենը	46,516,300

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1	8,333,300	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
2	3,456,000	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
3	10,000,000	Երևանի Քաղաքապետարան
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	21,789,300	

10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝

10.1 Դրամական միջոցները	45,940,300
10.2 Գույքը	

Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		45,940,300

11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝

11.1 Դրամական միջոցները	21,213,300
11.2 Գույքը	

Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		21,213,300

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝

Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1	R90.03.0 Ստեղծագործական գործունեություն	24,727,000	6-րդ և 7-րդ կետում նշված ծրագրերի համար
Ընդամենը		24,727,000	

Նշումներ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստացված դրամաշնորհից 2023թ-ի ընթացքում չի ծախսվել 576,000 ՀՀ դրամի չափով, որոնն էլ ենթակա է ետ վերադարձման ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____3_____ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրություն, անունը, ազգանուն

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Երևանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական
փառատոն ՀԿ ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Երևանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոն հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) 2023 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընդգրկող ժամանակաշրջանի համար կազմված հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունը (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություն), հանրային միջոցների ֆինանսավորման մասով՝ հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություն:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունը՝ հանրային միջոցների ֆինանսավորման մասով, բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացնում Կազմակերպության 2023 թվականի տարեկան մուտքերի ընդհանուր գումարը և ստացման աղբյուրը, ինչպես նաև դրամական միջոցների և այլ գույքի օգտագործման, կանոնադրական նպատակներին ուղղված ծախսերը՝ համաձայն «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 27 մայիսի 2020 թվականի թիվ 477-Ն հրամանով հաստատված հաշվետվության ձևաչափի և լրացման կարգի պահանջների:

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի (ՀԷՄՍԽ) կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագրքի»* (Մասնագիտական էթիկայի կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող մասնակգիտական էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում - Ֆինանսական հաշվետվության հիմունքը

Մենք ուշադրություն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվության կազմման հիմունքին, այն է՝ Կազմակերպության ղեկավարությունը ֆինանսական հաշվետվությունը կազմել է՝ հիմնվելով «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 27 մայիսի

2020 թվականի թիվ 477-Ն հրամանով հաստատված հաշվետվության ձևաչափի, ներկայացման և հրապարակման կարգի պահանջների վրա: Ֆինանսական հաշվետվությունը պատրաստված է՝ օժանդակելու Կազմակերպությանը բավարարելու «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջը: Արդյունքում ֆինանսական հաշվետվությունը կիրառելի չէ այլ նպատակների համար: Մեր կարծիքը չի ձևափոխվում այս հարցի հետ կապված:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության համար

Ղեկավարությունը պատասխանատու է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն ֆինանսական հաշվետվության պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվության պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունը պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը (եթե կիրառելի է), ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Կազմակերպությունը լուծարելու կամ Կազմակերպության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վրահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով զերծ է էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվությունն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվության հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվության էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Չեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվության ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվության հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Սույն անկախ աուդիտորի եզրակացության համար հիմք հանդիսացած աուդիտորական առաջադրանքի պատասխանատու ղեկավարն է՝

Տնօրեն

Հայկ Մարգարյան

«Թրասթ Աուդիտ» ՓԲԸ

16 մայիսի 2024թ.

Առաջադրանքի պատասխանատու

Նելլի Սարգսյան

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.05.2024 16:33